ԵՐԵՎԱՆԻ Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2014թ. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում

- 2014թ. դեկտեմբերին ավարտվեցին 2012 թ. հոկտեմբերից սկսված շինարարական աշխատանքները, որոնց արդյունքում Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան ՊՈԱԿ-ին պատկանող Արաբկիր վարչական շրջանի Հովսեփ Էմինի 123 հասցեում գտնվող փոքր մասնաշենքն ամբողջությամբ շահագործման հանձնվեց, որպես հանրակացարանային մասնաշենք:

- Հարդարվեցին շենքի բոլոր արտաքին ճակատները, վերակառուցվեց գլխավոր մուտքը, արտաքին փայտյա պատուհանները վերափոխվեցին եվրոստանդարտին համապատասխան մետալոպլաստե պատուհաններով, ամբողջովին վերակառուցվեց կտուրը և արտաքին ընդանուր ջրահեռացումը փոխարինվեց կենտրոնացված ջրահեռացման խողովակներով, գլխավոր ճակատային հատվածի ասֆալտբետոնյա ծածկույթի թեքություններով լուծվեց տարածքի ընդհանուր ջրահեռացումը:

- Բարեկարգվել և ցանկապատվել է հանրակացարանի գլխավոր ճակատային մասին հարող տարածքը: Անցկացվել է նոր ոռոգման խողովակաշար:
- Շենքի շահագործումից հետո հանրակացարանը ընդհանուր մակերեսներով ներառում է հետևյալ սենյակները՝

1-ին հարկ

ա) 5 երկտեղանոց սանհանգույցով սենյակներ - ընդհանուր մակերեսը՝ 83 մքառ. /կահավորված/,
2 երկտեղանոց սանհանգույցով և խոհանոցով լյուքս սենյակներ - ընդհանուր մակերեսը՝ 72 մքառ. /չկահավորված/,
բ) պարետի սենյակ, սպիտակեղենի պահեստ, օժանդակ սենյակ - ընդհանուր մակերեսը՝ 37 մքառ.,
գ) խոհանոց, լվացքատուն - ընդհանուր մակերեսը՝ 78 մքառ. /կահավորված/,
դ) ընդհանուր օգտագործման սանհանգույց - մակերեսը՝ 9 մքառ.,
ե) նախասրահ - ընդհանուր մակերեսը 166 մքառ.:

2-րդ հարկ

ա) 10 երկտեղանոց սենյակներ - ընդհանուր մակերեսը՝ 172 մքառ. /կահավորված/,
բ) Լվացքատուն, չորանոց - ընդհանուր մակերեսը՝ 17 մքառ. /կահավորված/,
գ) Խոհանոց- ճաշասենյակ - ընդհանուր մակերեսը՝ 36,6 մքառ. /կահավորված,

դ) Լողասենյակներով սանհանգույցներ /տղամարդկանց և կանանց առանձնացված/ - ընդհանուր մակերեսը՝ 50 մքառ.,
ե) Նախասրահ - ընդհանուր մակերեսը՝ 149 մքառ.:

3-րդ հարկ

ա) 10 երկտեղանոց սենյակներ - ընդհանուր մակերեսը ՝172 մքառ. /դեռևս կահավորված չեն/,
բ) Լվացքատուն, չորանոց - ընդհանուր մակերեսը՝ 17մքառ. /դեռևս կահավորված չէ/,
գ) Խոհանոց-ճաշասենյակ - ընդհանուր մակերեսը՝ 36,6 մքառ. /դեռևս կահավորված չէ/,
դ) Լողասենյակներով սանհանգույցներ /տղամարդկանց և կանանց առանձնացված/ - ընդհանուր մակերեսը՝ 50 մքառ.,
ե) Նախասրահ - ընդհանուր մակերեսը՝ 149մքառ.:

- 2013 թ.-ի հոկտեմբեր ամսից սկսված համալսարանի Թումանյան 42 հասցեի 1-ին և 2-րդ ուսումնավարչական մասնաշենքերի տանիքի վրա մանսարդային հարկի կառուցման աշխատանքները /1850մքառ. մակերեսով/ 2014թ.-ի հոկտեմբերից ժամանակավորապես դադարեցվել են:

- Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են 1-ին մասնաշենքի ամբողջ մետաղական կարկասի մոնտաժումը, հատակների երկաթբետոնյա հեծանների և սալերի բետոնացումը, տանիքի գունավոր ալիքավոր ցինկապատ թիթեղի և ջրահեռացման խողովակների մոնտաժումը: Ավարտին են հասցվել արտաքին պատերի կառուցումը և արտաքին հարդարումը: Տեղադրվել են եվրոպատուհաններ: Ավարտվել է նաև տանիքի ջերմամեկուսացումը:

- Համալսարանի 2-րդ մասնաշենքում կատարվել է մետաղական կարկասի մոնտաժման աշխատանքների 40 %-ը և հարկերի երկաթբետոնյա հեծանների և սալերի բետոնացման աշխատանքների 40 %-ը:

- Շինարարական աշխատանքները դադարեցվել են մինչև 2015թ.հոկտեմբերը՝ շինարարների հետ կնքված համաձայնագրով:

- Հաշվետու ժամանակահատվածում տնտեսական մասի աշխատակիցների ուժերով կատարվել է Թումանյան 42 հասցեի Թումանյան-Սարյան փողոցների մասնաշենքերին հարող տարածքների գազոնների և համալսարանի ներքին բակի տարածքների կանաչապատման, ցանկապատման աշխատանքները:

2014թ. ԵՊԼՀ-ի եկամուտները կազմել են **2.013.920.700** */երկու միլիարդ տասներեք միլիոն ինը հարյուր քսան հազար յոթ հարյուր/* ՀՀ դրամ, ընթացիկ ծախսերը՝ **1.569.363.300** */մեկ միլիարդ հինգ հարյուր վացունինը միլիոն երեք հարյուր վացուներեք հազար երեք հարյուր/* ՀՀ դրամ, կապիտալ ծախսերը՝ **139.216.7** */հարյուր երեսունինը միլիոն երկու հարյուր տասնվեց հազար յոթ հարյուր/* ՀՀ դրամ: